

ԺԸ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒ ՄԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Մերուժան Կարապետեան

ԺԸ դարի առաջին քառորդում Այսրկովկասում եւ Հարեւան երկրներում իրավիճակի կտրուկ փոփոխութիւնները (տեղական ժողովուրդների ազատագրական պայքարը, աֆղանների կողմից Սպահանի գրաւումը, ռուս-թուրքական ծաւալապատական հակամարտութեան սրումը, Այսրկովկասի թուրքական ռազմակալումը եւ այլն) բազմիցս է արժանացել պատմագիտութեան ուշադրութեանը: Հրատարակուել ու շարունակուելու են հրատարակուել աղբիւրագիտական նորանոր վկայութիւններ տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական փոփոխութիւնների վերաբերեալ:

Արդէն երկար ժամանակ է, ինչ իր վրայ է հրաւիրել շատ պատմաբանների ու աղբիւրագէտների ուշադրութիւնը ԺԸ դարի առաջին կէսին տարածաշրջանում քաղաքական ու տնտեսական լայն գործունէութիւն ծաւալած մի հայ անհատի՝ Եղիա Մուշեղեան Կարնեցու թողած հսկայածաւալ բազմածանր գրաւոր ժառանգութիւնը¹: Եղիա Մուշեղեանի թողած գրա-

կան ժառանգութեանն առաջինը մենագրորէն անդրադարձաւ Վիեննայի Մխիթարեան հայրերից Հ. Համազասպ Ոսկեանը, որը յատուկ քննութեան նիւթ դարձրեց Եղիա Մուշեղեան Կարնեցու կողմից կեանքի վերջում շարադրուած ինքնակենսագրական բնոյթի գործը՝ «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրեցի ի ազգէն Ֆռանկաց, մանաւանդ ի խաբեբայ կրօնաւորացն եւ ի սուտ եխպայրց եւ բարեկամ կոչեցելոց» խորագրով Վիեննայի Մխիթարեան ձեռագրատանը պահուող թիւ 980 ինքնագիրը²:

Կեանքի վերջում շարադրած այս գործում հեղինակը, կարծես, ամփոփում է իր ապրած կեանքը, ոչ տեղական նշանակութեան այն դէպքերն ու իրադարձութիւնները, որոնց, կամայ թէ ակամայ, մասնակից էր դարձել ինքը:

Մանկութեան տարիներին հօր կողմից ուսման ուղարկուեց Կարնեցի նշանաւոր մտաւորական, միաժամանակ կազմարար եւ գրավաճառ Ուրախ Գրիգորի մօտ. «...յանձնեց զիս հայրն իմ ի Աօտարի ումեմն, զի լուս[ա]նիմ զստոս հայոց, քանզի գրագէտ էր այրն այն եւ արուեստի կազմարար եւ գրգաձախ, որոյ անուն էր տիրացու Գրիգոր. մակ Ուրախութիւն վերաձայնիր...» (թ. 6ա)³:

1 Տե՛ս Աշոտ Յովհաննիսեան, *Հայ-ռուս օրինատացիայի խնդիրը*, Էջմիածին, 1921. *Եղիա Կարնեցու դիւանը*. Արթուր Մերձատր Արեւելքի եւ Անդրկովկասի պատմութեան. առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Գ. Աբրահամեանի, Եր., 1968 (հրատարակուել են մօտ 178 փաստաթղթեր). Ա. Երեւանցի, *Եղիա Մուշեղեանի գրական ժառանգութիւնից*, ՊԲՀ, 1972, թիւ 1, էջ 103-114. Բ. Լ. Չուգասզեան, *Եղիա Մուշեղեան (Կարնեցու) գրադարանը*, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, 1, էջ 61-74. Առնի, *Եղիա Մուշեղեանը առակագիր*, ՊԲՀ, 1984, թիւ 1, էջ 178-195. Առնի, *Եղիա Մուշեղեանի երոպակական դեսպանութիւնը*, ՊԲՀ, 1987, թիւ 4, էջ 82-91. *Եղիա Մուշեղեան, Թուրքերէն-հայերէն բառարան*, աշխատասիրութեամբ Բ. Լ. Չուգասզեանի, Երեւան, 1986:

2 Տե՛ս Հ. Հ. Ոսկեան, *Եղիա Աստուածատուրեան Մուշեղեան եւ իր գրական արտադրութիւնները*, Վիեննա, 1927 (Ազգ. մատենադարան, ԾԺԷ): Ձեռագրի նկարագրութիւնը հմմտ. Աստեմադարանի *հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի ի վիեննա*, հտ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 567-568:

3 Ուրախ Գրիգոր Կարնեցու մասին մանրամասն տե՛ս հայերէնով «Հանդէս ասօրեայ»-ում, ապա՝ «Ազգային մատենադարան» շարքով հրատարա-